



38. ԻՄԱՍՏՈՒՆ ԻՇԻ ՀԵՔԻԱԹԸ

Կար ու շկար իրեք ախպեր կար, իրեքն էլ կնկա տեր: Մեկ էլ մի ջաղացպան կար: Էտ ջաղացպանին ուներ մի իմաստուն էծ, էտ իրեք ախպորն էլ ունեին մի իմաստուն ձի: Էտ իրեք ախպերը ջաղացպանի իծիցը խարար չեին, ջաղացպանն էլ էտ իրեք ախպոր ձիուցը խարար չեր:

Օրերի մի օրը էտ իրեք ախպոր հացը հատել էր, մենձ ախպերը ցորենը բարցեց ձիուն, տարավ ջաղաց:

Ջաղացպանը էս ձիուն տեհավ թե չէ, Հ'իմացավ էս ձիու իմաստութունը. ձիու տիրոնը ասեց.—Մարթ, ինձ մի էծ ունեմ քու ձիուդ դայար, Հ'արի մարզ գանք, դու քու ձիուդ վրա, ես իմ իծի վրա, տափ կենանք, իրեք հետ ես, իրեք հետ դու, դու քթար՝ իմ էծը քեզ, ես քթա՛ քու ձին ինձ:

Ասեց.—Ջաղացպան, դե որ ընենց ա՛ Հ'արի ես իմ ձիու հունարն ասեմ, դու քու իծի հունարն ասա՛:

Ասեց.—Լա՞վ:

Ասեց.—Իմ ձին ընենց մի հունար ոմի որ՝ հարամու մեշ ընկնի, Հ'իրա տիրոնը ընենց կպահի, որ մարթ չի տենա: Դե,—ասեց,— դու էլ քու իծի հունարն ասա՛:

Ջաղացպանն ասեց.—Իմ իծին ընենց հունար ունի, որ տասը մարթ կամ տասնըհինգ մարթ բերես զոնաղ, ասես. «Ա՛յ էծ, մորթվի, քերթվի, փրթվի, էփվի, Հ'իրեք տեսակ կիրակուր ի՛լ, Հ'արի էս

Ճարթկերանց հ'աղաքը փովի, ուստեն, խմեն, քեֆ անենք, էն հրոպ-պեին կկատարի:

Նոր էտ մարթիկը մարչ էկան, նա ծին դրուց օրալըդ, նա էլ էծը դրուց օրալըդ: Համա ջաղացպանի էծը կշտին լէր, նորաթշու հետն էր:

— Դե,— ասեց,— հըմի ե՞ս տափ կենամ, թե դու Զիատերն ասեց: — Դու տափ կաց:

Ջաղացպանն ասեց: — Դնա հ'աշկերդ խփա:

Զիատերը գնաց, հ'աշկերը խփեց, ջաղացպանը տափ կացավ:

Զիատերը ետ բաց արեց հ'աշկերը՝ ման գալու: Շատ ման էկավ դես-դեն, շկարաց քթնի: Զին ասեց: — Այ տղա, ըտենց ման գալով շես կարալ քթնիլ, գնա նի մի՛տ ցրտունը¹ ձեն տուր, ասա՛. «Տափանի տակին ես, դուս հ'արի տափանի տակից, մեղք ես, կմրսես»:

Տափանի տակիցը դուս էկավ, — Տղա՛, — ասեց, — խփի, տարար իմ էծը:

Տղեն խփեց հ'աշկը, ջաղացպանը գնաց ալիրը ետ տվուց, մտավ ալրատունը. ալիրը բաշեց վրին: Էս տղեն հ'աշկերը բաց արուց ման գալու, շատ ման էկավ՝ քիշ, զգտավ:

Զին խոսաց տղի հետ, ասեց: — Ա՛յ արա, ըտենց ման գալով կարալ շես քթնես, գնա՛, — ասեց, — ալիրը ետ տու, ալրատանն ա. ասա. «Վե կաց, ջաղացպան, բանի՝ ալրի թողին մնաս, մեղք ես»:

Տղեն գնաց ալիրը ետ տվուց, ասեց: — Վե կա՛ց, ջաղացպան, քա՞նի ալրի թողին մնաս, մեղք ես:

Ջաղացպանը վե կացավ ասեց: — Խփի՛, իմ էծը տարար:

Տղեն խփեց հ'աշկերը, ջաղացպանը գնաց նի մտավ նավի տակը: Էս տղեն հ'աշկերը բաց արուց ման գալու, շատ ման էկավ, քիշ՝ շքթավ:

Զին ասեց տղին, թե: — Հրեն նավի տակին ա, գնա՛ ձեն տու, ասա. «Քանի տանջվես, մեղք ես, դուս հ'արի»:

Տղեն գնաց նավի կուշտը, ձեն տվուց: — Ջաղացպան, մեղք ես, դուս հ'արի:

Ջաղացպանը դուս էկավ: — Տղա՛, — ասեց, — տարար իմ էծը:

¹ Քրաղացի անիվի տակը, (ծանոք. բանահավաբի):

— Հըմի, — ասեց, — ջաղացպան, նորաթը իմն ա, գնա խփի, տափ կենամ:

Էտ ջաղացպանը հ'աշկերը խփեց, էս տղեն դես ընկավ, դեն ընկավ, որ տափ կենա, տեղը քթավ ոչ: Զին ասեց. — Ա՛յ տղա, ըտենցով կարալ չես, հ'արի նի մտի յալիս տակը:

Գնաց տղեն նի մտավ յալի տակը:

Ջաղացպանը հ'աշկերը բաց արուց ման գալու, ման էկավ քթավ ոչ, ձիուն դես քշեց, դեն քշեց՝ չէլավ, իլլաճը կտրվեց, ասեց. — Տղա՛, դուս արի:

Տղեն դուս էկավ:

— Հը՛, — ասեց, — տղա, տարար իմ էծը:

— Դե՛, — ասեց, — խփի՛, ջաղացպան, հ'աշկերդ:

Ջաղացպանն հ'աշկերը խփեց, տղեն ընկավ դես-դեն, որ տափ կենա, տեղ քթավ ոչ:

Զին ասեց. — Ա՛յ տղա, հ'արի՛, հ'արի՛ նի միտ, — ասեց, — պոշիս տակը:

Նի մտավ պոշի տակը: Ջաղացպանը հ'աշկերը բաց արուց ման գալու: Ման էկավ դես-դեն՝ քթավ ոչ: էկավ ձիուն առավ ձեռ, պընչին տվուց, գլխին տվուց, յալը բանցրացրուց, քթավ ոչ. իլլաճը կտրվեց, կաննեց զրադին, ձեն տվուց. — Տղա, դուս հ'արի, կարըմ չեմ քթնիլ:

Տղեն ձիու պոշի տակիցը դուս էկավ:

— Հը՛, — ասեց, — ջաղացպան, ո՞նց ա:

— Տղա, — ասեց, — տարար իմ էծը:

— Դե, ջաղացպան, խփի՛ էս մի հետն էլ:

Ջաղացպանը հ'աշկերը խփեց, էս տղեն դես ընկավ, դեն ընկավ, տափ կենալու, տեղը քթավ ոչ:

Զին կանչեց տղին, ասեց. — Ա՛յ տղա, հ'արի նի մտի ճռներիս արանքը:

Տղեն էկավ նի մտավ ձիու ճռների արանքը: Ջաղացպանը հ'աշկերը բաց արուց ման գալու, դես ման էկավ, դեն ման էկավ, քթավ ոչ, էկավ ձիուն առավ ձեռ, նի՛լավ, քշեց, վե էկավ, պոշը բանցրացըրուց, յալի տակը ման էկավ, պնչերը ման էկավ; իլլաճ չէլավ, կաննեց զրադին՝ ձեն տվուց. — Տղա՛, դուս հ'արի:

Տղեն դուս էկավ կաննեց զրադին. — Դե՛, — ասեց, — ջաղացպան, գնա էծը բե՛:

Զաղացպանը վե կացավ, գնաց իբին, էծը բերուց, տվուց ձիառիրունը: Զիատերը առավ էծը, իրա դանը բարցեց ձիում, գնաց տում:

Էծը տարավ տում, ախարտանքը հարցրին.— Էս ի՞նչ էծ ա:— Ախաբեր,— ասեց,— Էս զաղացպանի էծն ա, մի մարիֆաթով էծ ա, մարշ ենք էկել, տարել եմ:

— Ի՞նչ մարիֆաթ ունի,— ասեցին:

— Դե որ ըտենց ա,— ասեց,— զնացեք կանչեցեք տերտերին, իրիցփոխին, տանուտերին, օքնականին, կանչեցեք՝ գան ղոնաղ, էծի մարիֆաթը կտենաբ:

Դնացին, կանչեցին տերտերին, իրիցփոխին, տանուտերին, օքնականին, էկան նստեցին էտ մարթի տանը:

Ասեց.— Ա՛յ էծ, մորթվի, քերթվի, փրթվի, էփվի, ի՛լ իրեք տեսակ կիրակուր, արի քաշվի էս մարթկերանց հառաւը:

Էծը էս սհաթը մորթվեց, քերթվեց, էփվեց, էլավ իրեք տեսակ կիրակուր, էկավ քաշվեց էս մարթկերանց հառաւը: Կերան, խմեցին, լիացան: Շնորակալութուն արին, որ էթան, տեհան էծը մկը-կալով գենը զնաց:

Ախաբերը վե կալավ ախարտանցը ասեց.— Էս իծի մարիֆաթը էս ա:

Օրերի մի օր, դրանց մենք ախարտ կնիկը սիրեկան ուներ, ասեց.— Էս լավ ա, հազիր բան ա, բերեմ իմ սիրեկաններին պատիվ տամ:

Գնաց կանչեց իրա սիրեկան տերտերին ու տանուտերին բերուց տում, նստացրուց ու ասեց իծին.— Ա՛յ էծ, մորթվի, քերթվի, փրթվի, էփվի, ի՛լ իրեք տեսակ կիրակուր, արի էս մարթկերանց հաղաքը:

Էծը ետ դառավ տնազ տվուց. ռժա, յա, յա» արուց:

Կնիկը իծի վրին բարկացավ, ասեց.— Քու տվողիդ հերն անիծած, ասըմ եմ՝ ի՛լ կիրակուր, արի էս մարթկերանց հաղաքը:

Էլեղ ետ դառավ էծը տնազ տվուց. ռժա, յա, յա» արուց:

Էտ կնիկը փետը վե կալավ, դրա պողերի մեջտեղումը տվուց. փետը կպավ իծի պողերից, էտ կնիկն էլ կպավ փետիցը:

Տերտերը ասեց.— Օրհնած, դու մեզ պըտի խայտառակե՞ս, էտ ի՞նչ արիր:

Ասեց տերտերը, վե կացավ, որ էթա փետիցը էտ օղլուշաղը պոկեր, տերտերն էլ կպավ էտ օղլուշաղից:

Տանուտերն ասեց.—Տերտեր, ի՞նչ արիր:

— Դե՛ օրհնած, ի՞նչ անեմ, արի ինձ պոկի, ազատվենք ըստեղից, էթանք:

Տանուտերը վե կացավ, որ տերտերին պոկի, տանուտերն էլ կպավ տերտերից:

Էկավ գեղի մելը մահենիք¹ պատահեց, տերտերին ման էկան, թթան ոլ, իրիցփոխը սալըդ առավ, թե ֆլանի տանն ա, վե կացավ գնաց, տեհավ որ ըտեղ ա:

— Տերտեր,— ասեց,— մեռել կա, ոռւ էկել ես ըստեղ բանդ ըլել, բա՛ ի՞նչ անենք էտ մարթկերանց:

— Ի՞նչ անեմ, օրհնած, որ ըսենց ա ըլել, կարաս՝ հ'արի պոկի, վե կենանք, էթանք:

Իրիցփոխը գնաց, որ պոկի տերտերին, ինքն էլ կպավ տերտերից:

Էկավ գեղի մելը նաշալնիկ, պրիստավ էկավ, հարցրեց, թե.—Տանուտերն հ'ո՛ւր ա, կանչեցեք:

Ման էկան, թթան ոլ: Հարցրին. թե՝ ֆլանի տանն ա:

Գզրին ղրգեցին թե.—Գնա՛ կանչի:

Գզիրը գնաց, տեհավ որ հրես հ'իրար ոռից կպած են:

Ասեց.—Տանուտեր, ախր նաշալնիկ, պրիստավ ա էկել, քեզ ուղըմ են, ի՞նչ ես էկե բանդ ըլե ըստի:

— Ի՞նչ անեմ, ա՛յ որթի, խաթի մել եմ ընկե, թե կարաս՝ հ'արի պոկի, վե կենանք էթանք:

Գզիրը գնաց, որ տանուտերին պոկի: Գզիրն էլ կպավ տանուտերիցը:

Էտ մարթիկը մնացին էտ տանը, էծը դվորը երմիշ էր ըլըմ, դրանք էլ հետը երմիշ ին ըլըմ:

Մնաց ընչանք իրիկումը. իրիկումը էտ կնանոնց մարթիկը էկան աշխատութան տեղիցը, տեհան իրանց տունը լիքը մարթ, էն պուճուր տղի կնիկը օթախըմն էր, էն միշնեկ տղի կնիկը տանը թունդիրը կախ էլած էր: Էտ ախպերտանքը էկան, էտ թունդիրը կախ էլած օղլուշաղին հարցրին.— Էտ մարթկերանց ո՞վ ա կանչել ըստեղ:

¹ Ննշեցյալ, (ծանոր. բանանավագի):

Ասեց. — Մենձ տաքերակինս:

Գնացին օթախը, պուռուրին հարցրին, նա էլ ասեց. — Մենձ տաքերակինս ա կանչել:

Էկան կաննեցին էտ մարթկերանց կուշտը, էտ մենձ ախպերն ասեց. — Դղի՛ր, դու խի՞ ես էկել էս տունը:

— Նաշալնիկ էր էկել, տանուտերին ուզըմ ին, իմացա որ ըստի ա՝ էկա որ կանչեմ, տե՛ա ըտենց իրար կպած: Ուզեցա տանուտերին պոկեմ, ես էլ կպա տանուտերիցը:

— Է՛ծ, — ասեց, — գզըրին բաց թո՛ղ:

Էծը զզըրին բաց թողեց:

— Դե՛, — ասեց, — գղի՛ր, դու գնա:

Գղիրը գնաց:

Ասեց. — Իրիցփոխ, խի՞ ես էկել:

Ասեց. — Ննջեցյալ պատահեց, էկա որ տերտերին կանչեմ, տեհա ըստենց: Տերտերը ասեց. «Օրշնած, արի պոկի, վե կենանք էթանք», ուզեցի պոկեմ, ես էլ կպա տերտերիցը:

— Դե՛, — ասեց, — Է՛ծ, իրիցփոխին էլ բաց թող:

Էծը իրիցփոխին բաց թողուց:

— Դե՛, իրիցփոխ, դու էլ գնա:

— Է՛, տանուտեր, դու խի՞ ես էկել:

Տանուտերը զրից քթավ ոչ, որ ասի:

Ասեց. — Էծ, տանուտերին բաց թող:

Էծը տանուտերին բաց թողուց, իրեք ախպերն էլ փետը վե կալան՝ էս տանուտերին էնքան տվեցին, հալից քցեցին, վե կալան տարան քցեցին քուշեն, էկան նեքսև:

Ասեցին. — Տե՛րտեր, դո՞ւ խի ես էկել, դու քահանա մարթ:

Տերտերը բան չկարեց ասի:

Ասեց. — Է՛ծ, տերտերին բա՛ց թող:

Էծը բաց թողուց, իրեք ախպերը փետը վե կալան, ինչ դդամ տանուտերին ին ծեծել, էրկու էն դդամ տերտերին ծեծեցին. վե կալան, տարան քցեցին քուշեն, էկան նեքսև:

Հարցրեց էտ մենձ ախպերը իրա կնկանը՝ էտ մարթկանցը խի՞ իր կանչել:

Մեղավոր էր, չկարեցավ բան ասի:

— Դե՛, Է՛ծ, — ասեց, — էս օղլուշաղին բաց թող:

Ասեց. — Է՛ծ, փետն էլ բաց թող:

Էն էրկու ախպերը մոտացան ոչ, մենձ ախպերը փետը վե կալավ, իրան կնկանը տո՛ւր թե կտաս. էնքան տվուց, հալից քցեց:

— Դե, ախպրտանք, գիտա՞ք ինչ կա. ես էս երկրի հացը է՛ւ շե՞մ ուտըմ, տունն էլ ձեզ, տեղն էլ ձեզ, ես թարգիվաթան եմ ըլնըմ, կորլըմ:

Ասեց ու դուս էկավ էտ մարթը, գնաց:

Օրը օրի վրովը անց կացավ, էն միշնեկ ախպերը ասեց.— Ես էլ շեմ ուտըմ էս հացը, իմ ախպերը գնաց, ես էլ եմ էթըմ:

Մնաց էն հ'էքսի օրը՝ էտ պուճուր ախպերը գնաց իրա կնկա կուշտը:

— Կնի՛կ,— ասեց,— ոռւ քու կաթդ, օխտը տարի ճամփա կպահես, օխտը տարեն վրին էկա՝ դու իմն ես, ես քունն եմ, թէ շէկա ընդուց դենը դու գիտաս:

Էտ տղեն էլ ընկավ ճամփա, գնաց ախպորտանցը հասավ: Ճամփի կիսին հ'իրար պատահեցին.— Էթանք միտեղ¹ աշխատենք, ապրենք:

Է՛, ընկան ճամփա ու գնացին:

Շատ գնացին, քիշ գնացին, աստված ա գիտող, շոլումը մութը տվուց վրա, դես մտիկ տվին, դեն մտիկ տվին, շենվիկ շկա, դեղ շկա: Սարի դոշին մի կրակ էրևաց:

Էն մենձ ախպերն ասեց.— Տղե՞ք, էկեք էս կրակը բռնինք, էթանք, բալի թե գեղ ա, կամ տուն ա:

Գնացին էտ կրակը բռնած, նի մտան ըտեղ, տեհան մի տուն ա, մի օղլուշաղ կա մելը, իրեք ախչիկ: Նի մտան բարեկեցին: Էտ օղլուշաղը առավ դրանց բարեց, ասեց.— Բարո՞վ, հազար բարին եք եկել, եկեք նստեք:

Նստեցին, դինչացան, էս օղլուշաղը ասեց.— Բեղարած կըլիք, տեղ քցեմ, քնեք:

Մի օթախի մեջ էրկու շերկ² տեղ քցեց, մի շերկը էտ տղեքը քնեցին, մի շերկը իրա ախշլկերքը:

Պուճուր տղեն քնեց ոչ, ասեց.— Կարելի ա ըստեղ մի բան կա, որ էտ պառավը բերուց էտ ախշկերանցը ըստեղ քնացըուց:

Կացավ. կես քշերին տեհավ ձեն ա գալի. ուսուզով վե կացավ:

¹ Միասին, (ծանոք. բանահավաքի):

² Կարգ, (ծանոք. բանահավաքի):

գնաց դռնիցը մտիկ տվուց, տեհավ էս պառավը ատամները քսըմ
ա բարի, քսըմ ա տախտակի:

Ասեց, իրա սելը. ուս օղուշաղը պըտի մեղ վնասի։ Էկավ
ախպրտանցը վե կացրուց.—Վե՛րեթ,—ասեց,—վե՛րեթ, մենք մա-
հի դռանն հնք։

Ախպերտանքը վե կացան, ասեցին.—Հը, ի՞նչ կա:

— Դե՛,—ասեց,—մեր տեղը բաց արեթ։

Իրանց տեղը որ բաց արեցին, մի ախպորը կանչեց իրա հետ,
էկան էտ ախլըկերանցը մի մին վե կալան տարան իրանց տեղը
զրին, իրանց փափախները դրին էտ ախլըկերանց գլխները։ Ախլը-
կերանց աղլուխը վե կալան իրենց գլուխը կապեցին, նի մտան էտ
ախլըկերանց տեղը՝ էտ էրկու ախպերը էլեղ քնեցին, էտ պուճուր
ախպոր քունը տարավ ոչ, քնեց ոչ։

Շատ մնաց՝ քիչ, մին էլ տեհավ Աղրահի պես պառավն էկավ՝
վրա պրծալ տղերանց տեղի վրա, էտ ախլըկերանցը փրթեց, ճիւըւ-
տեց, վեր ածեց, գնաց ու թեթ ընկավ քնեց։

Պուճուր տղեն ախպորտանցը վե կացրուց.—Վե՛րեթ,—ասեց,—
վախտով կորչենք. մեր գլուխը քյալակ կգա:

Վե կացան ու ընկան ճամփա, յա հո՛ւ յալլահ։

Գնացին հասան մի կարմնջի. էտ կարմնջի անըմը Երթըմկերած
կարմունջ էր, պառավը երթըմ էր կերել, որ էտ կարմունջը անց
կենար ոչ։

Շատ էր քնել, քիչ էր քնել պառավը, քնիցը զարթնեց, տեհավ
իրա ախլըկերանց սասը-սուսը¹ չկա:

Ասեց.—Ա՛յ շանըմ, էս իմ ախլըկերքը խի՛ չեն վե կենըմ։

Վե կացավ պառավը, գնաց նի մտավ օթախը՝ տեհավ որ տղա
շկա, ախլըկերքն էլ փրթված վե թափած են։

Ասեց.—Վայ գլխիս, ըս ի՞նչ օյին ա էկել իմ գլուխը։

Նի՛լավ կտուրը, մտիկ տվուց դըրա Երթըմկերած կարմունջը,
տեհավ որ տղեթը անց են կացել կարմունջը.—Է՛ գիտի,—ասեց,—
գնացեթ։ Երթըմկերած կարմունջը անց եթ կացել, էլ ֆայդա լունի։

Էս օղլուշաղը վեր էկավ ու գնաց կսկծու թեթ ընկավ քնեց։

Էտ տղեթը գնացին. շատ, քիչ գնացին մի քաղաքի թուշ էլան,

¹ Զալին, (ծանոր. քանակագի)։

ըտեղ մնացին, որ աշխատեն, մի տեղ ապրեն: Գնացին թաքավուրին էլան մեհտար, շատ լավ ծառայեցին:

Էտ պուճուր ախպերը թաքավորի հաշկին շատ դիր էկավ: Թաքավորը կանչեց իրա հառաջը, արեց ձեռ ու ոտ¹: էն էրկու ախպերտինքը բախլեցին դրան, սկսեցին շարախոսիլ:

Օրերից մի օր թաքավորը ուզեց ձի նի ըլի, որ էթա ման գալու. Էտ էրկու ախպերը ձիանը սարքեցին, դուս բերին, թաքավորը շատ հավանեց դրանց սարքած ձիուն. տղեփն ասեցին.— Թաքավոր, ի՞նչ շատ մայիլ ես ըլըմ, բա որ ձին էլ լավ ըլնի, ի՞նչ զըդամ լավ կըլնի:

— Իի՞ն, — ասեց թաքավորը, — իմ ձին լավը չի՞ն:

— Լավն ա, թաքավոր, համա մի պառավ կնիկ կա ֆլան տեղը, նրան մի հատ ձի ունի քու լայեղ:

— Էտ ո՞վ կըերի, — հարցրուց թաքավորը:

— Քու հառաջի տղեն կըերի, ոչ մինը կարալ չի բերի:

Կանչեց իրա հառաջի տղին, ասեց.— Ա՛յ տղա, ասըմ են ֆլան տեղը մի պառավ կա, նրան մի հատ ինձ լայաղ ձի ունի, գնա՞ բե:

— Թաքավոր, — ասեց, — նրա կուշտը էթալ ըլիլ չի, նա մի Ազրաիլ բան ա, ո՞նց կարամ էթա ընտի:

Ասեց.— Իլլան չկա, պըտի էթաս բերես, թե չէ գլուխդ կկըտրեմ:

Ասեց.— Թաքավոր, դե որ ասըմ ես, ինձ ժամանակ տուր մի օր:

Գնաց մալու-մուշկյուլ² օթախըմը նստեց:

Թաքավորի կնիկը էկավ էտ տղի օթախը, տեսավ մալուլ նըստած ա, ասեց.— Ա՛յ տղա, խի՞ն ես մալուլ նստել:

Ասեց.— Ի՞նչ անեմ, թաքուհի, թաքավորը ընենց մի բանի ազեմ արել, որ մնացել եմ մալուլ կաննած:

Ասեց.— Ի՞նչ բան ա ասըմ քեզ:

Ասեց.— Ասըմ ա գնա ֆլան տեղը, մի պառավ կնիկ կա, նրան մի ձի ունի ինձ լայեղ, գնա՞ բեր ինձ հըմար:

Թաքուհին ասեց.— Դրա հըմա՞ր ես մալուլ:

— Հա, — ասեց, — դրա հըմար ա:

1 Կառավարի, որի ձեռքով պիտի անցնի ամեն բան, (ծանոք. բանակամի):

2 Մոլորված, (ծանոք. բանամակամի):

Ասեց. — Դրա հըմար միտք մի անիլ, շատ հեշտ ա. կէթաս թաքավորիցը մի տոպրակ քիշմիշ կուղես. և մի հատ էլ քլոմդ կուղես, կէթաս զոմի էն մսըրբի վրիցը մի վերստ հեռու կշափես, էն հեռվիցը լաղըմ կտաս, կհասնես մսըրբի տակը, էն մսըրբի տակիցը որ ծակեցիր, ձին որ ծակը տեհավ՝ գոմը գլուխը կառնի, կէթա էն դիհը, կդա էս դիհը. էն քիշմիշիցը կառնես ձեռդ, փոռ՝ ւ-փոռ՝ անելով դևմ կանես դնչին, կամաց-կամաց ձին կդա էն քիշմիշի վրա, կուտի, որ կերավ՝ քիշմիշի տոպրակը կքցիս գլուխը, նա քիշմիշը կուտի, դու ծակը մենձացրու, որ մենձացրիր, նի կմտնես, գյամը կտաս գլուխը, թամքն էլ կողքին դրած ա, կթամքես ու կքաշես կրերես դռա, նի կըլնես կդաս:

Էտ ասելուն պես՝ էս տղեն էթըմ ա թաքավորի կուշտը, մի տոպրակ քիշմիշ, մի քլոմդ առնըմ, էթում ա պառավի տունը, թաքունու ասածի պես ձին դռա քաշըմ բերըմ:

Պառավը մի հաշկը քուն, մինը զարթուն տենըմ ա որ ձիու ձենը շատ գալիս ա, ասըմ ա. — Չո՛ո, հանտեր ինչ ըլել ա՝ ինձ աըլել, քեզ ի՞նչ ա ըլել:

Մնում ա մի էրկու սհաթ, իրեք, տենըմ ա որ ձիու ձենը կտըրվեց, ասըմ ա. — Զիու ձենը կտրվեց, էթամ տենամ էտ ի՞նչ էլավ:

Գալիս ա տենըմ, որ ձի չկա գոմումը: Մտիկ ա տալի, որ մսըրբի տակիցը ծակել են, քաշել տարել են: Դուս ա գալիս կտուրը՝ մտիկ տալի, տենըմ ա հրե՞ն տղեն հրեղեն ձին նի ա էլել, Երթըմկերած կարմունջը անց կացել:

— է՛, — ասըմ ա, — տարա՞ր, հողեղեն, տարար: — Սրտի կսկըծուն էթըմ ա վեր ընկնըմ, քնըմ:

Էս տղեն ձին բերըմ ա թաքավորի աղաքին կաննացնըմ, ասըմ ա. — Փեշքաշ ա քեզ, թա՞քավոր:

Թաքավորը շատ սիրըմ ա դրան, մենձացնըմ ա, էս ախակերտանքը ավելի ոխակալըմ են:

Մին օր ասըմ են. — Թաքավոր, էտ ի՞նչ բան ա, մի ձի ա հըլա, բա՞ էտ պառավին մի ծառ ոսմի, բա էն ինչդա՞մ լավ ա, որ մի ճուղը ամառ ա, մի ճուղը ձմեռ ա, մի ճուղը գարունք ա, մի ճուղըն էլ աշունք ա:

Թաքավորն ասըմ ա. — էտ ո՞վ կբերի:

— էտ ձին բերող տղեն կբերի, ո՞վ կբերի, — ասըմ են ախակերտանքը:

Կանըմ ա թաքավորը էտ տղին, ասըմ ա.— ԱՇ տղա, էս ձիու
տիրունը մի լավ ծառ ոմի, պըտի բերես, թե չէ գուխդ կկտրեմ:
— Թաքավոր,— ասըմ ա,— էտ հըլա ձին էր՝ նի էլա բերի',
ծառը ո՞նց բերեմ:

— Իլլան չկա, պըտի բերես:

— Դե',— ասեց,— մի օր ինձ ժամանակ տուր:

Տղին խեղճ, շվարած, գնաց օթախըմը նստեց, մտքի հետ ըն-
կավ, տեհավ թաքուհին էկավ:

— Հը՛, տղա, խի՛ ես մալու:

— Թաքուհի,— ասեց,— ի՞նչ անեմ, պառավին մի ծառ ոմի,
թաքավորը ասըմ ա. «Պըտի էթաս բերես». ես ծառը ո՞նց բերեմ:

— Ա քու տունը աստված շինի, շատ հեշտ ա. կէթաս թաքա-
վորիցը մի սազ կուզես, վե դնես էլ ածի, վեր ոմես էլ ածի. մի
ալմազ էլ կացին կուզես, մի տոպրակ էլ աղ ու տաքտեղ¹ վե կու-
նես, կէթաս պառավի շարդախը, տոպրակը շլակիդ՝ կնստես սազը²
կածես, սազի ձենին նա քու կուշտը կգա, նի կմտնի նեքսն ատամ-
ները սրելու, դու տոպրակը կախ կանես օճոռքիցը, սազն էլ կկա-
պես տոպրակիցը, էտ ալմազ կացինը վե կունես, կէթաս դրա ծա-
ռը, էտ պառավը դուս կգա շարդախը, կտենա որ սազի ձենը օճոռ-
քումն ա գալի, ընենց կիմանա դու օճոռքն ես բանցրացե, կտա
տոպրակին, աղն ու տաքտեղը կթափի հաշկերը, սրտի կսկըծուն
կէթա վե կընկնի. դու ծառը կկտրես, վե կունես, կբերես:

Տղին էթըմ ա թաքավորից սազ, մի ալմաստ կացին, մի տոպ-
րակ աղ ու տաքտեղ ա առնում, էթըմ ա պառավի տունը, շարդա-
խումը կաննըմ սազը ածըմ:

Պառավը սազի ձենին դուս կգա կասի. — Բարով, իսանառթի,
էկել ես հա՛:

Կասի. — էկել եմ:

Պառավը նի ա մտնըմ նեքսն, ատամները սրըմ, տղին տոպ-
րակը կախ ա անըմ օճոռքիցը, սազը կապըմ ա տոպրակի վրեն,
կացինը վեր ա ոմըմ, էթըմ ա ծառի կուշտը:

Պառավը դուս կգա կտենա, որ տղին հրեն բանցրացել ա օճոռ-
քից ա կպել, կթոշի կտա տոպրակը կճղի, աղ ու տաքտեղը կթափի
դրա հաշկերը: Ավելի կսկծա դուս շանը, կէթա ու վե կընկնի:

¹ Պապեզ, (ծանոք. բանահավամի):

Էս տղեն կացինը կտա ծառի քոթին, կկտրի, կդնի ուսին ու
յա՛լլա՛: Սար, ձոր, քար, քոլ ձեն կտա.— Հողեղենը տարա՛վ,
տարա՛վ:

Էս պառավն էլ լսըմ ա, համա ջանի կսկծուն վե չի կենըմ:
Միւելի մնըմ ա, հանգարտըմ ա.— Ա՛յ ջանըմ,— ասըմ ա,— սար,
ձոր, քար, քոլ ձեն էր տալի «Հողեղենը տարա՛վ», էթամ տենամ
էտ ինչ բան-ա, հը՛:

Էթըմ տենըմ ա, որ ծառը չկա:

— Վա՛յ գլխիս,— ասըմ ա,— ծառս էլ տարան:

Նի՛լում ա կտուրը, մտիկ տալի, տենըմ ա, որ տղեն հրե՛ն ծա-
ռը ուսին Երթըմկերած կարմունջը անց ա կացել, էլեղ էթըմ ա կսկ-
ծուն վեր ընկնըմ:

Էս տղեն ծառը բերըմ ա, թաքավորի պալատի հառաշը կան-
նացնըմ:

— Փեշքաշ ա, թաքավոր, քեզ:

Թաքավորը մտիկ ա տալի ծառին, ճուղերին, շա՛տ հավանըմ
ա, էս տղին ավելի սիրըմ ա, ավելի մենճութուն ա տալի:

Ախաղերտանքը նախանձից տրաքըմ են: Էրկու ախաղեր մասլա-
հաթ են անըմ.— Սա մեր պուճուրն ըլի, մեղանից մենճանա՛, բա-
ի՛նչ անհնք, ախաղեր:

Էն մի ախաղերն ասըմ ա.— Բերենք դրկենք պառավի հըմար,
էթա փշանա, էլ շգա:

Էն մինն էլ ասըմ ա.— Շատ լավ ա էտ:

Դուս են գալի, տենըմ են որ թաքավորը էս ծառի գլխովը պտը-
րըմ ա, շատ սիրըմ ա:

Ասըմ են.— Թաքավոր, ի՛նչ շատ հայիլ-մայիլ ես ըլել:

— Որթի, շատ լավ բան ա, է՛:

— Թաքավոր,— ասըմ ա,— էտ ծառն ա, բա դրա տերը տես-
նա՛ս, ինչդամ յավն ա:

Թաքավորն ասեց.— Ո՞վ կարա բերի դրա տերը:

Ախաղերտանքն ասեցին.— էտ տղեն կբերի, էլ օշով չի կարա
բերի:

Կանչեց թաքավորը տղին.— Տղա՛,— ասեց,— էս ծառի տիրուր
ավելի լավ են ասըմ, պըտի բերես:

— Թաքավոր, դրա տերը ես ո՞նց բերեմ, ախր:

— էլ մի՛ շատ խոսաւ, պըտի բերես, կրերես՝ կբերես, չես բե-
րի՝ գուխտ կէթա:

Տեհավ իլլաճ չի՛լում, մի օր ժամանակ ուզեց:

Գնաց իրան օթախըմը մալով նստեց. մտքի հետ ընկավ. մին
էլ տեհավ թաքուհին էկավ:

— Հը՛,— ասեց,— տղա,— ի՛նչ ես մալով նստել:

Ասեց.— Ի՞նչ անեմ, թաքուհի, էս դոնըմ¹ թաքավորը ընենց
բանի աղեմ արել, որ ըլելու բան լի:

— Ի՞նչ ա,— ասեց թաքուհին:

— Ինձ ասըմ ա, թե՛ գնա էս ծառի տիրովը բե: Ես ո՞նց
էթամ բերեմ:

— Ա՛ քու տունը շինվի, շատ հեշտ ա, դու դրա հըմար միտք
ես անըմ:— Ասեց.— Տղա՛, կէթաս թաքավորին կասես. ոՔեղնից
ուզըմ եմ մի զանդուղ, չորս հատ էլ սըրըղ², մի հատ էլ սեհզի³
փոստ, ամեն մազին մի բոժոժ», էտ կէթաս կառնես թաքավորից,
կգաս իմ կուշտը:

Տղեն վե կացավ, գնաց թաքավորի կուշտը, թաքուհու ասած
բաները առավ, բերուց թաքուհու կուշտը:

Թաքուհին ասեց.— Տղա՛, էտ բոժոժի ձենը որ վեր հէլավ, էն
պառավը ընենց կիմանա, թե իրա հոգիառն ա, էկել ա իրա հոգին
պըտի առնի: Էտ փոստն էլ, էտ զանդուղն էլ վե կունես, կէթաս պա-
ռավի տունը, զանդուղը շարդախումը վե կդնես, բերանը բաց կա-
նես, մեխերն էլ կդնես կուշտը, էտ փոստը վե կունես՝ նի կըլես
կտուրը, կրցես վրիդ, հերթըկի դրադին կկանես, որ մի քիշ կը թափ
տաս, պառավը կզարզանդի, կմտցնես էս զանդուղի մեշ, կբերես:

Տղեն առավ զանդուղն ու փոստը, գնաց նի մտավ պառավի
տունը, զանդուղը դրուց շարդախուր, ինքը նի էլավ կտուրը, փոստը
քցեց վրին, մոտացավ հերթկին, իրան ժաժ տվուց, պառավը սար-
սափից, իմացավ, թե Գարբիկել հրեշտակը էկել ա ֆոքին առնի, ձեն
տվուց.— Ի՞նչ եք ուզըմ ինձանից, ժամանակ տվեք իմ հաշըվները
վերլացնեմ, նոր հոքիս առեք:

Տղեն մեկ էլ իրեն թափ տվուց:

¹ Անգամ, (ծանոք. բանահավաքի):

² Երկար մեխ, (ծանոք. բանահավաքի):

³ Նոխազ, (ծանոք. բանահավաքի):

Պառավը ասեց.— Որ սաբբը շեք անըմ, թողեք գլուխս էլա շինեմ, զանս թիլացավ:

Տղին ձեն տվուց.— Որ ըտենց ա, շարդախումը մի զանդուղ կա, գնա նի միտ մելը, ժամանակ տամ:

Պառավը վե կացավ գնաց շարդախը, տեհավ զանդուղը, գնաց նի մտավ մելը: Տղին վեր էկավ ու էն հրոպակեին զանդուղի բերանը փակեց, մխերը տվուց շորս կողքիցը, շաթում քցեց, շլակեց, յա՞լ-լահ:

Պառավը հասկացավ, որ էս էն տղին էր, ասեց.— Տղա՛, տանըմ ես, հըմա Երթըմկերած կարմունջը որ հասնենք, ինձ իմացըրա:

Էտ տղին գնաց, հասավ Երթըմկերած կարմունջը, ըստեղ կան-նեց:

Պառավն ասեց.— Տղա, իսի՞ կաննեցիր:

Ասեց.— Նանի՞, Երթըմկերած կարմունջն ա:

Ասեց.— Ա՞նց ես կացել, թե նոր ես էթըմ կարմունջը:

Ասեց.— Շատն անց եմ կացել:

— Դե՛ որ,— ասեց,— անց ես կացել, տա՛ր, պյոծավ աշ-խարքը:

Էտ տղին վե կալավ, տարավ թաքավորի կուշտը: Տարավ վե դրուց, ասեց.— Ըհը՛, թաքավոր, փեշքաշ ա:

Ասեց.— Տղա՛, դա բաց արա՛:

— Թաքավոր,— ասեց,— ըսդար ժամանակ ինչ ասել ես՝ ես լսել եմ, մի բան էլ ես ասեմ, ոու ինձ լսի:

Թաքավորն ասաց.— Ասա՛, որթի:

Ասեց.— Թաքավոր, իրեք օր ինձ ժամանակ տուր, գամ բաց անեմ, մտիկ տու

Ասեց.— Լա՛վ, իրեք օր քեզ ժամանակ:

Տղին էտ ժամանակը առավ ու էկավ գլուխն առավ յա՛ հույսլա, փախչի, որ պրծնես, դըրա իրան երկիրը: Իրեք օր ճամփա էկավ, մտածեց թե կարալ շեմ պրծնիլ պառավի ձեռիցը, մի ձորի մեշ ման էկավ մի զաղա քթավ, զաղի բերնին էլ մի զաղացի քար կար քցած, գնաց կողքերը պտըտվեց, մի տեղից ծակեց, նի մտավ էտ զաղին, մնաց ըտե:

Իրեք օրը որ թամամեց, թաքավորը տեհավ տղա շկա, ինքը բաց արուց, բաց անելու բաշտան, առյուծ Աղրահիլը դուս էկավ.

ո՞ւ թագավոր թողաց, ոչ քաղաք թողաց, ոչ գեղ թողաց, իսանա-
թի ֆոտը կտրեց, ընկավ էտ տղի քամակը ման գալու: Ման գալով
էկավ էտ ձորը, գնաց տեհավ մի զաղա, ջաղացաքարը բերնին
քցած: Զաղացաքարի ծակովը մտիկ տվուց զաղեն, տեհավ էտ
տղեն էտ զաղըմբ:

— Տո իսանորթի, բա էտ դվո՞րն ես էկե, — ասեց:

Ասեց. — Զաղացի քարի ծակովն եմ էկե:

Ասեց. — Ես էլ կա՞րամ գալ:

Տղեն ասեց. — Խի՞ շես կարալ գալ:

Պառավը գլուխը դեմ արուց էտ ջաղացաքարի ծակին, շարշար-
պեց, զլուխը անց կացավ, ջանդաքը էթըմ լի, հըմի ուզըմ ա գլու-
խը դուա քաշի, գլուխն էլ դուա լի գալի: Էտ տղեն փետով բգեց էտ
քարի սեպին, սեպը որ դուա էկավ՝ քարը վեր ընկավ, պառավը
տակը մնաց ջնջխվեց:

Նոր տղեն ազատվեց պառավիցը: Հանգիստ ընկավ ճամփա-
դըբա իրա տունը. էկավ տեհավ կնիկը նստած ա, էն ախպրտանց
կնանիքը լկան: Խոշ ու բեշ արեց կնկա հետ:

Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մու-
րազին:

Աստըծանից իրեք խնձոր վեր էկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսո-
ղին, մինն էլ՝ անգազ զնողին:

